Տեղեկանք

<<Համաշխարհային պատմություն>> առարկայի 6-9-րդ դասարանների չափորոշչում և ծրագրում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Առարկայի գործող չափորոշիչը և ծրագիրը հաստատվել են 2008 թվականին: Գործողության մեջ մտնելուց հետո ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի և նրա մասնաճյուղերի պատմության մասնագետների կողմից պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ Երևան քաղաքի և Հանրապետության մարզերի մի շարք հանրակրթական դպրոցներում, կազմակերպվել են հանդիպումներ առարկան դասավանդող մասնագետների հետ: Մշտադիտարկումներից և հանդիպումներից հետո կազմակերպվել են քննարկումներ ու սեմինարներ ուսուցիչների հետ՝ պետական չափորոշչին և առարկայի ծրագրային պահանջներին գործող ծրագրի և դասագրքերի համապատասխանության, դրանք ուսուցման գործընթացում արդյունավետ կիրառելու կարողությունների ու հմտությունների շուրջ:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ, ինչպես առարկայի չափորոշիչը, այնպես էլ ծրագիրը, ունեն լրամշակման և բեռնաթափման կարիք: Թեմաների զգալի մասը ծավալուն է, շարադրված է գիտական, խրթին լեզվով, չի համապատասխանում տվյալ խմբի սովորողների տարիքային, հոգեբանական, մտավոր, լեզվական և ֆիզիոլոգիական առանձնահատկություններին:

Ա. Չափորոշչում կատարված փոփոխություններ

Չափորոշչային փոփոխությունները կատարվել են թեմաների բեռնաթափման և կրճատման, թեմաների միավորման և խոշորացման, ձևակերպումների կոնկրետացման ու հստակեցման, անհարկի կրկնությունները վերացնելու, թեմաների ժամանակագրական և թեմատիկ խմբավորման սկզբունքներին համապատասխան:

Ստորև ներկայացնում ենք չափորոշչում կատարված փոփոխությունները.

1) Չափորոշչի հայեցակարգը, բովանդակային միջուկը, սովորողների պատրաստվածությանը ներկայացվող եռամակարդակ պահանջները լրամշակվել են և հստակեցվել:

2) Գործող չափորոշչում որոշ թեմաների վերաբերյալ չկային սովորողների պատրաստվածությանը ներկայացվող եռամակարդակ պահանջներ. լրամշակված տարբերակում եռամակարդակ պահանջներն ընդգրկում են առարկայի բովանդակային միջուկի բոլոր թեմաները:

3) Հստակեցվել է գիտելիքների և կարողությունների խառնաշփոթը՝ երբ գիտելիքը ներկայացվել է որպես կարողություն, հմտություն, իսկ կարողությունն ու հմտությունը՝ գիտելիք:

4) Ա մակարդակում տրված բարդ պահանջները պարզեցվել են, հեշտացվել կամ տեղափոխվել են Բ ու Գ մակարդակ և, ընդհակառակը, Բ ու Գ մակարդակներում տրված հեշտ պահանջները տեղափոխվել են Ա մակարդակ կամ վերաձևակերպվել են: Օրինակ՝ տերմինների, հասկացությունների և գաղափարների բացատրությունները, որոնք առարկայի ավելի բարձր մակարդակի իմացություն են պահանջում, տեղափոխվել են Բ կամ Գ մակարդակներ, օրինակ, չափորոշչի նախկին տարբերակի Հին Հռոմից մեզ հասած, նաև միջնադարյան դարաշրջանին բնորոշ բառերի, արտահայտությունների ու եզրույթների բացատրության պահանջը տեղափոխվել է Ա մակարդակից Բ մակարդակ և այլն:

5) Սովորողների պատրաստվածությանը ներկայացվող եռամակարդակ պահանջները կազմվել են ըստ յուրաքանչյուր բաժնի:

Բ. Ծրագրում կատարված փոփոխություններ

Ծրագրային փոփոխությունները կատարվել են հետևյալ սկզբունքներով՝

ա) թեմաների բեռնաթափում և կրճատում,

բ) թեմաների միավորում և խոշորացում,

գ) ձևակերպումների հստակեցում և պարզեցում,

դ) թեմաների ժամանակագրական և թեմատիկ խմբավորում:

Բեռնաթփման արդյունքում յուրաքանչյուր դասարանում տնտեսվել են դասաժամեր՝ 6 – րդ դասարանում՝ 3 ժամ, 7 – րդ դասարանում՝ 3 ժամ, 8 – րդում՝ 2 ժամ, 9 – րդում՝ 3 ժամ: Դրանք տրամադրվել են կրկնություններին և ամփոփմանը, ինչը հնարավորություն կտա ամրապնդել յուրացված գիտելիքները, զարգացնել կարողությունները, առավել արդյունավետ կիրառել գնահատման նոր համակարգը, ուսուցանող և միավորային գնահատման տարբեր տեսակները:

Ստորև ներկայացնում ենք կատարված ծրագրային փոփոխություններն ըստ դասարանների.

6-րդ դասարան

1) Բաժին 1-ի <<Անցում նստակեցության>> և <<Նախնադարյան մարդկանց հասարակական կյանքը>> ենթաթեմաները միավորվել են ու կրճատվել. Բաժին 1-ին հատկացվել է 3 ժամ՝ նախկին 4-ի փոխարեն:

2) Բաժին 2-ի <<Միջագետքի պետությունները>> և <<Միջագետքի տերությունները>> ենթաթեմաները միավորվել են ու բեռնաթափվել: Կրճատվել է նաև <<Հնդկաստան և Չինաստան>> ենթաթեման: <<Աքեմենյան Իրան>> ենթաթեմայի ուսումնասիրումը տեղափոխվել է <<Կրոն>> ենթաթեմայից առաջ:

3) Բաժին 3-ի <<Պատմության արշալույսը>> և <<Պոլիսային կարգի հաստատումը>> ենթաթեմաները միավորվել են և բեռնաթափվել: Բաժին 3-ին հատկացվել է 5 ժամ (նախկին 7-ի փոխարեն):

4) Բաժին 8-ին հատկացվել է 8 ժամ (նախկին 7-ի փոխարեն):

5) 6-րդ դասարանի ծրագրում կատարված կրճատումների արդյունքում տնտեսված 3 ժամը հատկացվել է կրկնություններին:

7-րդ դասարան

1) Բաժին 1-ի <<Բյուզանդիան Հուստինիանոս Ի-ի դարաշրջանում>> և <<Բյուզանդիայի վերելքը>> ենթաթեմաները միավորվել են ու կրճատվել:

2) Բաժին 1-ի <<Սրբազան Հռոմեական կայսրությունը>> ենթաթեմայի ուսումնասիրումը տեղափոխվել է <<Վիկինգների դարաշրջանը>> ենթաթեմայից առաջ: Բաժին 1-ին հատկացվել է 7 ժամ (նախկին 8-ի փոխարեն):

3) Բաժին 2-ի <<Խաչակիրներ>> և <<Երեք խաչակիր արքաներ>> ենթաթեմաները միավորվել են մեկ՝ <<Խաչակիրներ>> ենթաթեմայի մեջ և զգալիորեն բեռնաթափվել:

4) Բաժին 4-ի <<Հնդկաստանը IV-XVII դարերում>>, <<Չինաստանը III-XVII դարերում>> և <<Ճապոնիան միջնադարում>> ենթաթեմաները միվորվել են <<Հնդկաստանը, Չինաստանը և Ճապոնիան միջնադարում>> ենթաթեմայում և զգալիորեն բեռնաթափվել: Բաժին 4-ին հատկացվել է 4 ժամ՝ նախկին 6-ի փոխարեն:

5) Բաժին 5-ի <<Նոր գիտություն>> ենթաթեմայի ուսումնասիրումը տեղափոխվել է <<Նոր Եվրոպայի ծնունդը>> ենթաթեմայից հետո:

6) 7-րդ դասարանի ծրագրում կատարված կրճատումների արդյունքում տնտեսված 3 ժամը հատկացվել է կրկնություններին:

8-րդ դասարան

1) Բաժին 1-ի <<Լուսավորության դարաշրջանը>> և <<Լուսավորյալ արքաների դարաշրջանը>> ենթաթեմաները միավորվել են և բեռնաթափվել:

2) <<Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին>> ենթաթեմայից առանձնացվել և առանձին ենթաթեմա է դարձել <<Հյուսիսամերիկյան գաղութների ազատագրական պատերազմը և հեղափոխությունը>> ենթահարցը:

3) Բաժին 1-ի <<Հետադիմությունը, հեղափոխությունը և հասարակական փոխհամաձայնությունը Եվրոպայում (1815-1850թթ.)>> ենթաթեմայից առանձնացվել է <<Ժողովրդավարական և ազգային հեղափոխությունները Եվրոպայում>>, ենթաթեման: Բաժին 1-ին հատկացվել է 13 ժամ՝ նախկին 14-ի փոխարեն:

4) Բաժին 2-ի <<Քաղաքական կյանքի առանձնահատկությունները>> և <<Ազատական շարժումների տարածումը>> ենթաթեմաները բեռնաթափվել են և միավորվել <<Քաղաքական կյանքի զարգացումը>> վերնագրի ներքո:

5) Բաժին 2-ի <<Ազգային նոր պետությունների առաջացումը Եվրոպայում>> և <<Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը>> ենթաթեմաները ևս միավորվել են: Բաժին 2-ին հատկացվել է 15 ժամ՝ նախկին 16-ի փոխարեն:

6) 8-րդ դասարանի ծրագրում կատարված կրճատումների արդյունքում տնտեսված 2 ժամը հատկացվել է կրկնություններին:

9-րդ դասարան՝

1) Բաժին 1-ի <<Փարիզի վեհաժողովն ու նոր աշխարհակարգը>>, <<Աշխարհի նոր իրողությունները>> և <<Հետպատերազմյան աշխարհակարգի չլուծված խնդիրները 1920-ական թվականներին>> ենթաթեմաները միավորվել են մեկ՝ <<Փարիզի վեհաժողովն ու նոր աշխարհակարգը>> ենթաթեմայի մեջ և զգալիորեն կրճատվել: Բաժին 1-ին հատկացվել է 12 ժամ՝ նախկին 13-ի փոխարեն:

2) Բաժին 3-ի <<Տնտեսության ձևերը (մոդելներ) նոր և նորագույն ժամանակներում>> և <<Պետական կառավարման ձևերը նոր և նորագույն ժամանակներում>> ենթաթեմաներն ամբողջությամբ հանվել են ծրագրից, քանի որ այդ ենթաթեմաները հիմնական դպրոցի սովորողների համար բարդ են և առաջարկվում է այն տեղակայել ավագ դպրոցի ծրագրում: Բաժին 3-ին հատկացվել է 6 ժամ՝ նախկին 8-ի փոխարեն:

3) 9-րդ դասարանի ծրագրում կատարված կրճատումների արդյունքում տնտեսված 3 ժամը հատկացվել է կրկնություններին և ամփոփմանը: